

# Մ Ա Ս I

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑԸ

### ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՁԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#### ՄԱՍ I -Ա

#### 2008 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության ծրագրի, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ կառավարության կողմից ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ), Հակակոռուպցիոն ռազմավարության և ՀՀ 2008-2010թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի պահանջները՝ 2008թ. սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպատակատղված է լինելու ձեռք բերված բարձր տնտեսական աճի և մակրոտնտեսական կայունության, ինչպես նաև իրականացվող սոցիալական քաղաքականության խորացման շարունակականության ապահովմանը:

Երկրի տնտեսական զարգացումը որակապես նոր հարթություն տեղափոխելու, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանման, գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման, մրցունակ, արտահանման կողմնորոշում ունեցող և ներքին ռեսուրսների հիման վրա գործող ճյուղերի գերակշռության ապահովման, բնակչության զբաղվածության և բարեկեցության մակարդակների շարունակական բարձրացման և աղքատության մակարդակի նվազեցման նպատակով 2008թ ՀՀ կառավարության կողմից իրականացվող առաջնահերթ քաղաքականության ուղղությունները կլինեն հետևյալները:

#### **Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում**

Գործարար միջավայրի բարելավումը և ներդրումների ներգրավումը՝ որպես տնտեսության կայուն զարգացման նախապայման, հանդիսանում է ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը և ուղղված է լինելու օտարերկրյա կապիտալի և շուկաների

փոխադարձ հասանելիությանը, ներդրումների պաշտպանությանը, գործարարական գործունեություն սկսելու և դադարեցնելու, վարկերի ստացման, արտահանման վարչարարական ընթացակարգերի և լիցենզավորման գործընթացների պարզեցմանը, ազատ մրցակցության խրախուսմանը, օտարերկրյա և տեղական ներդրումները կարգավորող օրենսդրության հստակ և միանշանակ կիրարկմանը:

Վերը նշված աշխատանքների համալիրն ուղղված կլինի Հայաստանը՝ որպես գործարարական գործունեության իրականացման համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորմանն ու գովազդմանը, միջազգային և օտարերկրյա ընկերությունների Հայաստան մուտքի խրախուսմանը, օտարերկրյա, այդ թվում սփյուռքահայության, ներդրումների ծավալների ավելացմանը:

Կիրականացվեն աշխատանքներ միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական համակարգի ձևավորման ուղղությամբ, ինչի արդյունքում որոշակիորեն կնվազեն ներդրումային գործունեության ռիսկերը:

Ներդրումային ոլորտում գործընկեր երկրների հետ բարենպաստ իրավապայմանագրային դաշտ ձևավորելու նպատակով կշարունակվի «Ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» միջազգային համաձայնագրերի կնքման գործընթացը:

Կկարևորվի նաև Հայաստանի և հայկական ապրանքների ու ապրանքանշանների հեղինակության ձևավորումը, միջազգային շուկաներում ամրապնդումը և այդ նպատակով արտաքին շուկաների մոնիտորինգի իրականացումը: Քայլեր կձեռնարկվեն ՀՀ առևտրային ներկայացուցիչների ինստիտուտի ընդլայնման և զարգացման ուղղությամբ, ինչը կնպաստի գործընկեր երկրների հետ առևտրատնտեսական կապերի ամրապնդմանը, հայրենական ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների ընդլայնմանը և ներդրումների ներգրավմանը:

Կընդլայնվի Հայաստանի՝ Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանն անդամակցությամբ ընձեռված հնարավորությունների օգտագործումը, ինչպես նաև ԱՀԿ-ին հետ անդամակցային պարտավորությունների իրականացման գործընթացը, մասնավորապես կշարունակվեն ՀՀ առևտրատնտեսական իրավական դաշտի մասնագիտական վերլուծությունները և ԱՀԿ համաձայնագրերի ներքո ՀՀ առևտրատնտեսական բնագավառին վերաբերող տեղեկատվության ծանուցման իրականացումը և ԱՀԿ քարտուղարությունից ստացված տեղեկատվության տրամադրումը հանրապետության շահագրգիռ կողմերին:

Տնտեսության զարգացման արդի փուլում օրակարգի հարց է դարձել մտավոր սեփականության պաշտպանությունը, հայրենական արտադրանքի և ծառայությունների որակի և մրցունակության բարձրացումը, ներքին շուկայի պաշտպանվածությունը, չափումների բնագավառում միասնականության և վերահսկողության ապահովումը, գործընթացների ներդաշնակեցումը միջազգային գործող համակարգերին, ԱՀԿ անդամ երկրների ապրանքների ազատ շրջանառության խոչընդոտների վերացումը:

Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պաշտպանության նպատակով կշարունակվեն աշխատանքները՝ ուղղված տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման խթանմանը, ապրանքների և ծառայությունների իրացման հետ կապված բարեխիղճ մրցակցության ապահովմանը, գիտության, գրականության և արվեստի զարգացման խթանմանը, մտավոր սեփականության գնահատման, իրավունքների գրանցման և պաշտպանության համակարգերի կատարելագործմանը, ոլորտում տեղեկատվության մատչելիության ապահովմանը:

Հեղինակային իրավունքի բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված կլինի ազգային մշակույթի և արվեստի զարգացման

Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտներում նախատեսվող միջոցառումների հիմնական նպատակն է լինելու նշված ոլորտների հետագա զարգացումը և ներդաշնակեցումը միջազգային համակարգերի հետ: Մասնավորապես նախատեսվում է.

-առանձին միջազգային և միջպետական ստանդարտների ուղղակի կիրառման ապահովում,

-առաջնային տեխնիկական կանոնակարգերի մշակում, որոնք կապահովվեն Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարում,

-ստանդարտացման բնագավառի հիմնադրությային ստանդարտների վերանայում՝ ՀՀ օրենսդրության և միջազգային ուղեցույցների պահանջների ապահովման նպատակով:

Կշարունակվեն աշխատանքները սպառողական շուկայում արտադրանքի և ծառայությունների որակի միջազգային ISO և Եվրոպական CEN ստանդարտների ուղղակի կիրառման և սպառողների շահերի պաշտպանության պետական վերահսկողության համակարգի կատարելագործման ուղղությամբ:

Ներքին շուկայի պաշտպանության բնագավառում նախատեսվում է հայրենական արտադրողների գործունեությանը խոչընդոտող հիմնախնդիրների բացահայտման և վերացման, հայրենական արտադրողների և սպառողների շահերի պաշտպանության, բարեխիղճ մրցակցային դաշտի ձևավորման և մենաշնորհային գործունեության չարաշահումների կանխարգելման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

#### **Տնտեսության ճյուղերի զարգացում**

Արդյունաբերական քաղաքականությունն առաջին հերթին կնպատակաուղղվի Հայաստանի՝ որպես արդյունաբերական երկրի կարգավիճակի ձեռք բերմանը, տեխնոլոգիական արդիականացման գործընթացների ակտիվացման խթանմանը, գիտության և նորարարության արդյունքների արդյունաբերության մեջ ներդրմանն աջակցությանը, մրցակցային առավելություններ, բարձր ավելացված արժեք և արտահանման կողմնորոշում ունեցող և ներքին ռեսուրսներն օգտագործող արտադրությունների զարգացմանը: Այս առումով գերակայություն կհանդիսանա քիմիական, հանքարդյունաբերական և լեռնամետալուրգիական համալիրների շարունակական զարգացումը:

Քիմիայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի ճյուղի ընկերությունների կայուն գործունեության ապահովմանը, ինչպես նաև արտաքին շուկաների ընդլայնմանը՝ մրցունակ արտադրատեսակների թողարկման միջոցով: Այդ գործընթացներին կնպաստեն ոլորտի կոնկրետ ընկերությունների զարգացման ծրագրերը:

Հանքարդյունաբերության և լեռնամետալուրգիայի հետագա զարգացման նպատակով նախատեսվում է ոլորտի զարգացման և կանոնակարգման հայեցակարգի մշակում, որի հիման վրա կիրականցվի ոլորտի անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքերի կատարելագործումը:

Կշարունակվեն աշխատանքները՝ ուղղված հանքարդյունահանման լիցենզային պայմանագրերի և տնտեսվարող սուբյեկտների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը, օգտակար հանածոների արդյունահանման համար ընդերքի

շահագործման արդյունավետության բարձրացմանը, հանքարդյունահանման ոլորտում լեռնային աշխատանքների համակարգի կանոնակարգմանը, ընդերքի ռաջիոնալ օգտագործմանը:

Հաշվի առնելով, որ ակնագործության և ոսկեգործության ոլորտի 1998-2004թթ. բուռն զարգացումը վերջին տարիներին փոխարինվեց արտադրանքի ծավալների անկմամբ, 2008թ. ոլորտի զարգացմանը միտված պետական քաղաքականությունը հիմնականում ուղղված է լինելու ադամանդագործության բնագավառում անկման տեմպերի կանխմանը և հետագա աճի ապահովման համար նախադրյալների ստեղծմանը, Ռուսաստանի Դաշնության հետ նոր ձևաչափերով համագործակցության զարգացմանը:

Ուշադրության կենտրոնում կլինի տնտեսություն- գիտություն, գիտություն- համալսարաններ կապերի սերտացման խրախուսման միջոցառումների, գիտական դպրոցների ձևավորման ուղղությամբ աշխատանքների իրականացումը, քիզնես դպրոցի ձևավորման հայեցակարգի ընդունումը, միջազգային կենտրոնների հետ համագործակցությունն ու ինտեգրումը:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակության պահպանման գործիք՝ ՀՀ կառավարությունը միջոցներ կձեռնարկի Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արդյունավետության շարունակական աճի, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառման, ինչպես նաև երկրում էլեկտրոնային հասարակության ձևավորման ապահովելու ուղղությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման երկարաժամկետ ռազմավարական մոտեցումների ամբողջությունը կարտացոլվի ոլորտի զարգացման հայեցակարգում:

Չարգացման առաջընթացով և նվաճումներով զբոսաշրջությունը հանրապետության տնտեսության առավել զարգացող ճյուղերից է: 2008թ. զբոսաշրջության զարգացման առաջնային քայլերն ուղղված կլինեն միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ և բարենպաստ երկրի նկարագրի ամրապնդմանը և միջազգային համագործակցության ակտիվացմանը, զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների կայուն որակի ապահովմանը և զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը, ՀՀ մարզերում զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջային գործունեությունը Երևան քաղաքից դեպի մարզեր ապակենտրոնացմանը:

#### **Տարածքային տնտեսական զարգացում**

ՀՀ կառավարության հիմնական գերակայություններից է մարզերի տնտեսական զարգացման և տարածաշրջանների տնտեսական մակարդակների համահավասարեցման քաղաքականության արդյունավետության էական բարձրացումը:

ՀՀ տարածքների տնտեսական զարգացման մակարդակների միջև առաջացած անհամահասունությունների հետևողական հաղթահարումը կապահովվի մարզերի զարգացման ծրագրերի մշակմամբ, տնտեսության ավանդական կլաստերներին աջակցելով և նոր կլաստերներ ստեղծելով, գործարար ակտիվության, ներդրումների, սպորանքների և մատուցվող հանրային ծառայությունների (ներառյալ փոստային և բանկային) հասանելիության բարձրացմամբ, համայնքային ենթակառուցվածքների զարգացմամբ:

Կիրականացվեն միջոցառումներ՝ ուղղված տարածաշրջաններում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՉ), զբոսաշրջության, արհեստագործության և ծառայությունների ոլորտի զարգացմանը, ին-

չը, հատկապես գյուղական, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում, կնպաստի սոցիալ-տնտեսական զարգացմանը և անհամաձայնությունների հաղթահարմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծմանը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ուղենիշերն են լինելու.

- ոլորտի զարգացմանն աջակցության ենթակառուցվածքի՝ Հայաստանի ՓՄՁ Ջարգացման Ազգային Կենտրոնի մարզային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ամրապնդումն ու դրանց գործունեության ընդլայնումը, ինչպես նաև նոր ներկայացուցչությունների ստեղծումը,

- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը՝ վարկային երաշխավորությունների տրամադրման և լիզինգային ծառայություններից օգտվելու ծրագրերի իրականացման շնորհիվ,

- գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը, սկսնակ գործարարների ձեռներեցության և ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացումը:

### **Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում**

ՀՀ-ում տարածքային և տեղական ինքնակառավարման համակարգերի զարգացումն ապահովելու համար, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի ամրապնդման նպատակով 2008թ. իրականացվող առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան.

- տարածքային միավորների զարգացման մակարդակների միջև առկա անհամաչափությունները կրճատելու, դրանց տնտեսական ակտիվության համաչափ բաշխման, համայնքների բնական ու տնտեսական հնարավորությունները կենտրոնացնելու, վարչական ծախսերը կրճատելու նպատակով վերանայել ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգը՝ մշակելով համայնքների խոշորացման հայեցակարգ,

- տեղական նշանակության խնդիրները համատեղ լուծելու և ռեսուրսների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նպաստել միջհամայնքային միավորումների ստեղծմանը,

- հստակեցնել ու սահմանել Երևան քաղաքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները և դրանց իրականացման մեխանիզմները, միջոցառումներ ձեռնարկել դրանց արդյունավետ կիրարկման ուղղությամբ,

- համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով, ելնելով Հայաստանի տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից և հաշվի առնելով ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը, ներդնել համայնքների ֆինանսական համահարթեցման նոր համակարգ՝ ինչը կնպաստի տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բևեռացման մեղմացմանը, համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդմանն ու զարգացմանը,

- օրենսդրական դաշտի կատարելագործման միջոցով միջոցառումներ ձեռնարկել համայնքների բյուջեների եկամտային մասի շարունակական աճի ապահովման, համայնքներում ծրագրային բյուջեներ ունենալու խնդրի լուծման ուղղությամբ,

- զգալի ուշադրություն դարձնել ՀՀ սահմանամերձ տարածաշրջաններին՝ աշխատանքներ տանելով այդ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու ուղղությամբ,

-մասնագիտական քննարկումների կազմակերպման և մեթոդական ձեռնարկների մշակման միջոցով ապահովել ընդլայնված լիազորություններով օժտված ավագանու և համայնքի պաշտպանված ղեկավարի համագործակցության, հակակշիռների և զսպումների լիարժեք մեխանիզմներ,

-աշխարհի տարբեր երկրների փորձի ուսումնասիրության և փոխանակման միջոցով համապատասխան աշխատանքներ իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և նրանց գործառույթների բարելավման ուղղությամբ,

-բարձրացնել տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը՝ համայնքային ծառայության ինստիտուցիոնալ կարգավորման և կատարելագործման միջոցով, մշակել և իրականացնել ուսուցման միասնական ծրագրեր և դասընթացներ,

-համայնքներում ներդնել կառավարման ժամանակակից տեխնոլոգիաներ, մասնավորապես, էլեկտրոնային կառավարման համակարգեր և ստեղծել տեղեկատվական միասնական բանկ:

### **Գյուղատնտեսության ոլորտ**

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2008թ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվեն ագրոպարենային ոլորտի հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար: ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության հիմնական ուղղություններից մեկն էլ կլինի հանրապետության անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության և վերարտադրության համալիր միջոցառումների իրականացումը:

Նախատեսվում է 2008 թվականին խորացնել ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

-պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների ներդաշնակեցում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի ձևավորում,

-տեղական արտադրողների շահերի պաշտպանության քաղաքականության իրականացման միջոցով տնտեսավարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,

-գյուղատնտեսության սպասարկող և արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,

-գիտա-կրթական, տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի կարողությունների ուժեղացում, համակարգի բարելավման մեխանիզմների ներդրում,

-ագրարային արտադրական գործընթացներում արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման աջակցություն:

Նշված քաղաքականության կենսագործման նպատակով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախատեսվող ծախսերը կնպատակաուղղվեն գերկայություն ունեցող հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացմանը.

-բնական կերահանդակների բարելավում և ջրարբիացում,

- հակահեղեղային միջոցառումներ իրականացնելու միջոցով հողերի բարելավում,
- հողերի ագրոքիմական հետազոտություններ և բերրիության բարձրացման միջոցառումներ,
- սերմնաբուծական և տոհմա-սելեկցիոն աշխատանքների բարելավում, տոհմային գործի կազմակերպում, արհեստական սերմնավորման միջոցառումներ,
- մարգային անասնաբուժական լաբորատորիաների և կրթական կազմակերպությունների կարողությունների ուժեղացում,
- բույսերի կարանտինի, պաշտպանության և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և ագրարային կանոններին համապատասխան՝ ֆիտոսանիտարական, սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական ոլորտում տեսչական վերահսկողության ապահովում,
- անտառային տնտեսության պահպանման, պաշտպանության, անտառների վերականգնման և կառավարման համալիր միջոցառումների իրականացում,
- գիտակրթական, տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում և զարգացում,
- գյուղատնտեսության ոլորտում հարկային արտոնությունների համակարգից սուբսիդավորման համագարգի անցման մեխանիզմների ներդրում,
- ագրարային ոլորտի տնտեսվարողներին շուկայախանման գործառնաբացում աջակցություն,
- գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում տնտեսվարող սուբյեկտներին տնտեսական գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում, գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում:

Ագրոպարենային համակարգի զարգացման 2008 թվականի քաղաքականության մեջ որպես գլխավոր նպատակ կմնա երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ, հանրապետության ագրարային հատվածում տնտեսվարման տարբեր ձևերի զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի գյուղացիական միավորումների և կոոպերատիվների ձևավորմանը, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրության այլ միջոցների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների իրացման և այլ բնագավառում ծագած հիմնախնդիրների լուծման և տնտեսվարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Իրականացվող ագրարային քաղաքականության և ներդրումային ծրագրերի կենսագործման արդյունքում 2008 թվականին կապահովվի գյուղատնտեսության համախառն արտադրանքի շուրջ 7.5 տոկոս աճ: Միաժամանակ, 2008 թվականին կանխատեսվում է գյուղատնտեսական մթերքների գների ինդեքսի 3.0 տոկոս տարեկան աճ և գյուղատնտեսության ոլորտում ՀՆԱ-ի աճը (հաշվի առած գյուղմթերքների գների ինդեքսի աճը) կկազմի 7-8 տոկոս, որը որոշակիորեն կնպաստի պարենային ապահովության հիմնախնդրի լուծմանը:

**Էներգետիկայի բնագավառ**

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղվելու է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության մակարդակի շարունակական բարձրացմանը, էլեկտրաէներգետիկական շուկայի հետագա ազատականացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացման գործընթացի խորացմանը, էներգահամակարգի զարգացման,

ֆիզիկապես ու բարոյապես մաշված էներգատեղակայանքների սերնդափոխության խթանմանը՝ անվտանգության, էներգամատակարարման հուսալիության և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի գործունեությունն ուղղված է լինելու ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ նվազագույն ծախսերով էներգահամակարգի զարգացման խթանմանը, այդ թվում՝ միջուկային էներգետիկ հզորությունների ստեղծմամբ, սեփական վերականգնվող էներգապաշարների առաջնահերթ իրացմամբ, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցմամբ, տարածաշրջանային էներգահամակարգի հետ ինտեգրմամբ:

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին կշարունակվեն հետևյալ ծրագրերը.

-«Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» և «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագիծ»՝ Միջազգային Համագործակցության Ճապոնական բանկ,

-«Տարածաշրջանային հզորության փոխանակում-1, Ալավերդի Գարդաբանի էլեկտրահաղորդման վերականգնում»՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վերականգնման վարկերի բանկ (KfW):

Պետական բյուջեի հատկացումների հաշվին կսկսվեն Հայկական ԱԷԿ-ում աշխատած վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի երրորդ հերթի շինարարության աշխատանքները:

Սեփական միջոցների, ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի և Եվրահամայնքի կողմից հատկացվող միջոցների հաշվին կշարունակվի Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

2008 թվականին նախատեսվում են հանրապետության վառելիքամատակարարման ուղիների զանազանեցման, տարածաշրջանային ինտեգրացման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները՝ Իրան-Հայաստան գազամուղի Քաջարան-Միսիան և Ջերմուկ-Արարատ հատվածների կառուցման շարունակում, մասնավոր կապիտալի ներգրավմամբ՝ ՀԷԿ-երի և հողմաէլեկտրակայանների կառուցման աշխատանքների իրականացում, Արաքս գետի վրա Մեղրի ՀԷԿ-ի կառուցման ֆինանսական սխեմայի հստակեցում և նախապատրաստական աշխատանքների կազմակերպում, Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման նպատակով երրորդ օղային գծի կառուցման աշխատանքների իրականացում, տարածաշրջանային համագործակցության ընդլայնում և խորացում, այդ թվում՝ Վրաստան-Հայաստան 400 կվ լարման օղային գծի կառուցում և այլն:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության «ԳԱԶՊՐՈՄ» ընկերության միջև կնքված համաձայնագրով 2008 թվականին կշարունակվեն Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության աշխատանքները:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի, դրանց կիրառման ապահովման մեխանիզմների մշակման ու ինստիտուցիոնալ կառույցների ստեղծման աշխատանքները՝ Եվրամիության համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման կիրառմամբ:



Իրենց լիարժեք աշխատանքները կշարունակեն «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի» հիմնադրամը, ինչպես նաև Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից ֆինանսավորվող «Փոքր ՀԷԿ-երի արդիականացման հիմնադրամ» ծրագիրը:

Էներգախնայողության միջոցառումների աստիճանական ներդրման գործընթացի խրախուսման ուղղությամբ կմեկնարկի ՀՀ կառավարության կողմից հաստատված Էներգախնայողության Ազգային Ծրագրից բխող միջոցառումների իրականացումը:

2008 թվականին **ջերմամատակարարման քնագավառում** կշարունակվեն համակարգի վերականգնման աշխատանքները: Այդ աշխատանքների արդյունքում իրենց լուծումը կստանան մի շարք կարևորագույն հիմնախնդիրներ, որոնցից են՝ ջերմամատակարարման ծառայությունների առևտրայնացման ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորիչ դաշտի զարգացումը, ջերմամատակարարման վերականգնման տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված ու մատչելի սխեմաների վերջնական ընտրությունը: Այս աշխատանքների հաջող ընթացքին կնպաստեն «Ջերմամատակարարման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի գործունեությունը, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող համապատասխան ծրագրերը:

### **Ջրային տնտեսություն**

Բնագավառում կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, ինչպես նաև ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումը:

2008 թվականի ընթացքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ կլինեն համակարգերում մասնավոր կառավարման ձևերի ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը, ջրային համակարգերի վերականգնմանն ու զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կազմակերպման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնաձախսաձածկման ապահովման շարունակումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2008 թվականի ընթացքում անհրաժեշտ է շարունակել ներդրումներ կատարել ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի համակարգերի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը, ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

-ապահովել Երևան քաղաքի շարունակական ջրամատակարարման ծրագրի իրականացումը և նպաստել «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում նույնատիպ գործընթացների աստիճանական ակտիվացմանը,

-ապահովել ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության ու Համաշխարհային բանկի միջև ֆինանսական համագործակցությունների շրջանակներում կնքված ներդրումային ծրագրերի իրականացումը,

-ապահովել և վերահսկել համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը,

- նպաստել գյուղական ենթակառուցվածքների զարգացմանը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև ոռոգման ջրով ապահովելու մասով,

-միջոցառումներ ձեռնարկել մաքրման կայանների վերականգնման և գործարկման ուղղությամբ, այդ թվում՝ Սևանի ջրավազանի մի շարք բնակավայրերի (թվով 5) կեղտաջրերի մաքրման կայանների, Երևանի «Աէրացիայի» կոյուղու մաքրման կայանի և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ կոյուղու մաքրման կայանի ներդրումային ծրագրերի մասով,

-Ասիական զարգացման բանկի հետ ձևավորել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ներդրումային ծրագրերի գործընթացը,

-ոռոգման հատվածում իրականացնել ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումներ,

-աջակցել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի իրականացմանը,

-նպաստել ջրառ իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծմանը,

-իրականացնել աշխատանքները Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար «Հայաստանի Հանրապետության կառավարության և Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման ծրագրի ֆինանսավորման» վարկային ծրագրի ներգրավման ուղղությամբ,

-շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը,

-խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը,

-գործուն մեխանիզմներ ստեղծել մատուցած ծառայությունների դիմաց վճարումների գանձման համար,

-միջոցառումներ ձեռնարկել ընկերությունների՝ տարիներով կուտակված պարտքերի մարման ուղղությամբ,

-իրականացնել վերահսկողություն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ,

-իրականացնել աշխատանքներ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման ուղղությամբ,

-իրականացնել աշխատանքներ գյուղական համայնքների խմելու ջրի նվազագույն ջրամատակարարումն ապահովող խնդիրների և միջոցառումների, ինչպես նաև ջրային տնտեսության համակարգում սեփականության իրավունքի և շահագործման պատասխանատվության տարանջատման և իրականացման ենթակա հարցերի ուսումնասիրման ուղղությամբ:

2008 թվականի ընթացքում նույնպես անհրաժեշտ է շարունակել խմելու և ոռոգման համակարգերը շահագործող ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունը: Այն պայմանավորված է նաև վերջնական սպառողների համար սուբսիդավորման հասցեագրված քաղաքականության չհստակեցման հետ: Ընդ որում, ոռոգման ոլորտում անհրաժեշտ է կիրառել սուբսիդավորման ծախսային մեթոդից՝ ըստ

արդյունքների դրամաշնորհների տեսքով ԶՕԸ-ներին ֆինանսական աջակցության պրակտիկային անցում կատարելու մեխանիզմները:

Ընդհանուր առմամբ, նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որոնք կապահովեն դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

### **Տրանսպորտ**

Տրանսպորտի բնագավառում 2008 թվականին ծրագրավորված տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ: Այդ նպատակին են ծառայելու 2008 թվականի պետական բյուջեում ընդգրկված պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերը, որոնք կազմվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հանձնարարականներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և պարտավորություններով:

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրով 2008 թվականին նախատեսվում է իրականացնել քանդված և վերանորոգման կարիք ունեցող ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծրագրով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին կիրականացվեն միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքներ:

Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ փոսային նորոգումների և ձմեռային պահպանության, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների պահպանության աշխատանքների իրականացումը տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդարձնի առավել դյուրին, անվտանգ և նվազ ծախսատար:

«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով 2008 թվականին նախատեսվում է իրականացնել վթարավտանգ տեխնիկական վիճակում գտնվող կամրջային կառուցվածքների և վթարավտանգ կամուրջների հիմնանորոգման աշխատանքներ:

### **Ավիացիա**

Օդային փոխադրումների քաղաքականության հստակեցման ուղղությամբ քննարկումներ են իրականացվում բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ տարբեր հարցերի շուրջ և շարունակվում են մշակվել քաղաքականություններ և սկզբունքներ՝ Հայաստանի Հանրապետության ավիափոխադրողների շուկայում ներկա և ապագա ավիափոխադրողների կողմից անվտանգ ծառայությունների մատուցուման ուղղությամբ: Որի հիմքում դրված է պարզեցված ընթացակարգերի կիրառումը հստակ քաղաքականության շրջանակներում, ինչը համահունչ է կառավարության կողմից որդեգրված տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելուն՝ ուղղված ընդհանուր տնտեսական քաղաքականության ռազմավարությանը:

Վարվող ճկուն օդային քաղաքականության արդյունքում, էապես դյուրացվել է օտարերկրյա ավիաընկերությունների մուտքը Հայաստանի Հանրապետության օդային փոխադրումների շուկա, ինչպես նաև շուկայում արդեն իսկ գործող օտարերկրյա ավիաընկերությունների կողմից իրականացվող կանոնավոր չվերթերի հաճախականությունները ավելացել են:

2008թ. գործունեության հիմնական ուղղություններն են.

-ՀՀ օդային փոխադրումների շուկայի կարգավորում և հայկական ավիափոխադրողների հետագա մրցունակության բարձրացումը,

-Եվրոպական երկրների Միացյալ ավիացիոն իշխանություններին (JAA) անդամակցության շրջանակներում ավիացիայի բնագավառում համատեղ ավիացիոն պահանջների ճանաչումը,

-«Ավիացիայի մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ու գերատեսչական նորմատիվ ակտերի համակարգի ձևավորումը,

-Թռիչքների անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-Ավիացիոն անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-Օդանավերի թռիչքային պիտանիության գնահատումը,

-Օդանավակայանների վերգետնյա սպասարկման տեխնիկական միջոցների շահագործման նկատմամբ վերահսկողությունը,

-Ավիացիոն մասնագետների վկայագրումը և որակավորումը,

-Օդային փոխադրումների կարգավորումը և լիցենզավորումը:

#### **Կապի բնագավառ**

2008 թվականին նախատեսվում է իրականացնել մարզկենտրոններից հեռահաղորդումների կազմակերպման ծրագիր: Տարածաշրջաններից թղթակցական տեսանյութերի հեռահաղորդման համար նախատեսվում է կառուցել միաթռիչք թվային ռադիոռելային գծեր /Ռ-Ռ-Գ/՝ մարզկենտրոններից դեպի մոտակա մայրուղային Ռ-Ռ-Գ կայան: Միջոցների տնտեսման նպատակով նախատեսվում է տեղադրել սիմպլեքսային Ռ-Ռ-Գ-ներ: Նշված ծրագրով նախատեսվում է ցանցի կազմակերպում յոթ մարզկենտրոնների հետ:

2008 թվականին նախատեսվում է իրականացնել ՀՀ տարածքում ռադիոճառագայթման մոնիտորինգի իրականացման ծրագիր, որի նպատակն է հեռուստառադիոծրագրերի եթերային հեռարձակումը, շարժական բջջային կապի ծառայությունների մատուցումը վնասակար խանգարումներից զերծ պահելու, չթուլատրված ռադիոհաճախականությունների տիրույթներում հեռարձակումների հայտնաբերման և բացառման, կապի համակարգի անվտանգության, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերի կառուցման և կենտրոնացված ղեկավարման իրականացման ապահովումը:

2008 թվականին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ՀՀ հեռահաղորդակցության գործակալության կողմից կիրականացվեն ՀՀ պետական մարմինների հեռահաղորդակցության միջգերատեսչական ցանցում ընդգրկված ավտոմատ հեռախոսակայանների սպասարկման, վերանորոգման, համակցման և ցանցի կապուղիների սպասարկման ու թողունակության ապահովման

աշխատանքներ: Պլանավորվող ծախսերը կապահովեն ՀՀ պետական մարմինների հեռահաղորդակցության միջգերատեսչական ցանցում ընդգրկված թվային ավտոմատ հեռախոսակայանների սպասարկումը, վերանորոգումը, համակցումը միջգերատեսչական ցանցին և միաժամանակ միջգերատեսչական ցանցի կապուղիների սպասարկումն ու պահպանումը:

### **Քաղաքաշինություն**

2008 թվականին քաղաքաշինական քաղաքականության բնագավառում շարունակվելու է Հայաստանի Հանրապետության համայնքների գլխավոր հատակագծերի մշակումը՝ համատեղված գոտիավորման փաստաթղթերի հետ, որը ելնելով համայնքի զարգացման ծրագրից՝ տարածքային ռեսուրսների համալիր վերլուծության հիման վրա հիմնավորում և սահմանում է համայնքի տարածքային զարգացման ուղղությունները, որոշում սոցիալական, մշակութային, արդյունաբերական, գյուղատնտեսական, բնապահպանական, ինժեներական և տրանսպորտային համակարգերի տեղադրման ու զարգացման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, բնական լանդշաֆտների, պատմամշակութային ժառանգության պահպանման միջոցառումները, ինչպես նաև տարածքի իրացման և կառուցապատման հերթականությունը՝ պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման պայմանների պարտադիր պահպանմամբ:

Բնագավառի ռազմավարական ուղղությունների խնդիրների կարգավորման նպատակով կարևորվում է ՀՀ պետական քաղաքաշինական կադաստրի ձևավորումը:

ՀՀ պետական քաղաքաշինական կադաստրը պետական տեղեկատվական համակարգ է, որը հիմք է ծառայում պետական քաղաքաշինական քաղաքականության, տարածքային զարգացման ռազմավարության, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, քաղաքաշինական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման համար:

Շինարարության ոլորտում 2008 թվականի ընթացքում կարևորվում է կրթական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակական բնույթի ապահովումը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսուցման մակարդակի էական բարձրացմանը, մշակութային կյանքի զարգացմանը, բնակչության համար ժամանցի վայրերի ստեղծմանը և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացմանը:

Կիրականացվեն նաև առողջապահական և մարզական օբյեկտների կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, որոնք կնպաստեն բնակչության առողջ ապրելակերպին:

2008 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել նաև քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (շինարարական նորմերի, ձեռնարկների, ստանդարտների, կանոնների և այլ փաստաթղթերի) մշակման աշխատանքները: Հանրապետությունում տեխնիկական կանոնակարգերի քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազան համալրելու նպատակով փաստաթղթերի մշակման աշխատանքները տարվելու են ինչպես հանրապետական, այնպես էլ՝ միջպետական մակարդակով ԱՊՀ երկրների հետ համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

2008 թվականին բնակարանային ոլորտում նախատեսվում են աշխատանքներ՝ ուղղված պետական աջակցության նպատակային ծրագրերի շրջանակներում անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն և բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդի պահպանմանը:

Բնակապահովման ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական միջամտությամբ հնարավորություն ընձեռել 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած 72 փախստական ընտանիքներին, Գյումրի և Սպիտակ քաղաքներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում 1968թ. հունիսի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով մարզի քանդված բնակելի տների՝ փայտյա տնակներում ժամանակավորապես բնակեցված ընտանիքներին, ՀՀ Սյունիքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերի սահմանամերձ բնակավայրերի սողանքային գոտիներում գտնվող, բարձր աստիճանի վնասվածություն ունեցող (5-րդ և 4-րդ կարգի) բնակելի տների բնակիչներին լուծելու իրենց բնակարանային խնդիրները:

Բնակապահովման ծրագրերի շրջանակներում պետական միջամտության կարիք ունեցող քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծումը նախատեսվում է պետական անհատույց ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ շուկայից բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու կամ ուղղակի ֆինանսավորման միջոցով անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու համար:

Բնակապահովման ծրագրի հետ մեկտեղ 2008 թվականին նախատեսվում է անդրադառնալ բազմաբնակարան շենքերի անվտանգ շահագործման ապահովմանն ուղղված աջակցության ծրագրի իրականացմանը: Նշված ծրագրի շրջանակներում միջոցներն ուղղվելու են բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման (վերականգնման) աշխատանքների իրականացմանը:

#### **Արդարադատություն և օրենսդրության կատարելագործում**

2008 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակելու է օրենսդրության կատարելագործման աշխատանքները՝ նկատի ունենալով հասարակական հարաբերություններում իրավական գործոնների նշանակության աճը: Դրանց ուղենիշ են հանդիսանալու Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև Եվրամիության օրենսդրությանը ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման ազգային ծրագիրը:

2008 թվականին կապահովվի իրավական տեղեկատվական համակարգի զարգացումը և հասարակայնության համար իրավական տեղեկատվության մատչելիությունը:

Պաշտոնական հայտարարությունների անխաչընդոտ ու անվճար հասանելությունը ինտերնետային ցանցում և կենտրոնացված տեղեկատվական պաշարի ստեղծումն ապահովելու նպատակով 2008 թվականին ևս պաշտոնական հայտարարություններ կայք էջի վարումն կիրականացվի պետության կողմից:

Միաժամանակ, 2008 թվականին կշարունակվեն իրավաբանական միասնական տերմինաբանության մշակման ու կիրառման աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան օրենսդրական հակասությունների, անհստակությունների, անճշտությունների և երկիմաստ շարադրանքի վերացման համար:

Օրենսդրության կատարելագործումը պետության գերակա նպատակների թվում է, և դրան առնչվող խնդիրներն ու գործառույթները հատուկ ուշադրության են արժանի: Հատկապես դա կարևորվում է առաջիկա տարիներին, կապված Եվրամիության օրենսդրությանը ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման արդեն իսկ նախաձեռնված գործընթացի հետ: Վերջինիս շրջանակներում, մասնավորապես, պետք է ապահովվի հզոր ռեսուրսներ ունեցող Թարգմանչական կենտրոնի ստեղծումը, դրա հետագա կատարելագործումը:

Դատախիրավական բարեփոխումների 2-րդ փուլում ընդունված մի շարք օրենքներից բխող պահանջների իրագործումը 2008 թվականին արդեն իսկ էական ազդեցություն կունենա հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման վրա՝ նպատակ ունենալով ձևավորել արդյունավետ և հասարակության համար մատչելի դատական համակարգ: ՀՀ դատական օրենսգրքի պահանջների համաձայն, տարեսկզբից կձևավորվի դատական համակարգի նոր կառուցվածքը, ինչը իրական հենք կհանդիսանա դատարանների կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների որակական մակարդակի բարձրացմանը: Մասնավորապես, 2008 թվականի հունվարի 1-ից հանրապետության ներկայիս առաջին ատյանի բոլոր դատարանները կվերածվեն ընդհանուր իրավասության դատարանների, կսկսեն գործել վարչական դատարանը՝ Երևանում, հարավային քրեական և հարավային քաղաքացիական մասնագիտացված դատարանները՝ Եղեգնաձոր քաղաքում, հյուսիսային քաղաքացիական և հյուսիսային քրեական մասնագիտացված դատարանները՝ Դիլիջան քաղաքում:

Կշարունակվի 2006 թվականից դատական համակարգի շրջանակներում ձևավորված ինքնակառավարման մարմինների կարողությունների ամրապնդումը: Դատական ծառայության կառավարման միասնականությունը կապահովի պետական կառավարչական հիմնարկ հանդիսացող Դատական ղեկավարամենտը:

2008 թվականին և հետագա տարիներին կշարունակվի Դատախիրավական բարեփոխումների 2-րդ փուլի նպատակների կատարման համար 2007 թվականին Միջազգային Զարգացման Ընկերակցության հետ ստորագրված վարկային և դրամաշնորհային միջոցներով ֆինանսավորվող դատախիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի իրականացումը: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավարտել հանրապետության գրեթե բոլոր դատարանների շենքերի վերակառուցումը, ստեղծել նոր ենթակառուցվածքներ, իրականացնել դրանց կահավորումը, համակարգչային և այլ սարքավորումներով համալրումը: Մասնավորապես, 2008 թվականի ընթացքում նախատեսվում է հանրապետության մարզերում գտնվող մի շարք դատական շենքերի կառուցման աշխատանքների մեկնարկը:

Զուգահեռաբար կիրականացվեն նաև դատախիրավական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնք ուղղված են ամբողջ դատական համակարգի ամրապնդմանը և բարելավմանը, դատական համակարգում շրջանառվող տեղեկատվական միասնական շտեմարանի ստեղծմանը, ԴԱՀԿ ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, հարկադիր կատարման այլընտրանքային ծառայությունների ներդրման հնարավորությունների ստեղծմանը, վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների կիրառմանը, իրավական տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկության բարձրացմանը:

2008 թվականին կշարունակվի քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը՝ նպատակ ունենալով ապահովել՝

-գոյություն ունեցող ենթակառուցվածքների և նրանց նյութական բազայի կատարելագործումը, օրենսդրությամբ նախատեսվող նոր պատժատեսակների կիրառման համար շինությունների կառուցումը և առկա շինությունների վերակառուցումը, մասնավորապես՝ «Սևան» քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարությունը, «Գորիս» քրեակատարողական հիմնարկի նոր տարածքի ձեռքբերումը, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի նոր ռեժիմային մասնաշենքի կառուցումը, ցմահ դատապարտված անձանց պահման նոր քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարությունը,

-պատժի կրման պայմանների և կարգի հետագա հումանիզացումը միջազգային իրավական չափանիշներին համապատասխան, դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների առավել լիարժեք պաշտպանությունը, նրանց պահելու պայմանների բարելավումը, դատապարտյալների բուժապասարկման և զբաղվածության կազմակերպման հիմնախնդիրների լուծումը,

-դատապարտյալների ուղղման, սոցիալական վերականգնման (սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիա) համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ այդ գործին հասարակական միավորումների և զանգվածային լրատվության միջոցների ներգրավմամբ:

### **Արտաքին քաղաքականություն**

ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակներն են.

-երկրի անվտանգության ապահովումը, տարածաշրջանում կայունության և ժողովրդավարության հաստատումը, պետությունների միջև իրավահավասար և գործընկերային փոխհարաբերությունների ձևավորումը, լարվածության օջախների հնարավոր բռնկումների կանխարգելումը, ԼՂ խնդրի խաղաղ կարգավորումը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը,

-երկրի հարածուն զարգացման տնտեսական առաջընթացի, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման, ժողովրդավարական բարեփոխումների անցկացման, մարդու իրավունքների և ազատությունների պահպանման համար բարենպաստ արտաքին պայմանների ձևավորումը:

ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում գերակայող ուղղություններ են՝ արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի ամրապնդումը և հետագա զարգացումը, Եվրոպական կառույցներում Հայաստանի լիարժեք ինտեգրումը, անվտանգության բաղադրիչների ամրապնդումը:

Տնտեսական գործոնի ակտիվացումն իր արտահայտությունն է գտել Հայաստանի արտաքին քաղաքականության ընդհանուր մոտեցումների մշակման ընթացքում և անվտանգության գործոնին զուգահեռ գերակայություն է ստանում հարաբերությունների խորացման, որոշումների ընդունման և դրանց իրագործման առումներով:

Հայաստանի տնտեսական անվտանգության, տնտեսական առաջընթացի համար բարենպաստ արտաքին պայմանների ապահովման, տնտեսական զարգացման աճի վերջին տարիների բարձր տեմպերի պահպանման առաջնահերթ հիմնախնդիրներն են արտաքին աշխարհի հետ կապող տրանսպորտային, էներգակիրների տեղափոխման երթուղիների անխափան գործարկումը, դրանց տարբերազատումը (դիվերսիֆիկացումը), արտաքին առևտրի համար նպաստավոր պայմանների ապահովումը, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնումը և նվաճումը, արտաքին ներդրումների ապահովումը:

Եվրոպական ինտեգրացման գործընթացներին Հայաստանը միացել է՝ անդամակցելով Եվրոպայի խորհրդին և Եվրոպական Միության հետ կնքելով Գործընկերության ու համագործակցության պայմանագիր: Հայաստանը շարունակում է հետևողականորեն իրականացնել ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կայացման, եվրոպական չափանիշներին դրանց համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումներ, պետությունների Եվրոպական ընտանիքին լիարժեքորեն անդամակցելու ծրագրեր: Այս ամենին նոր երանգ է հաղորդելու Հայաստանի ակտիվ մասնակցությունն ու գործունեությունը ԵՄ «Նոր հարևանության» ծրագրի շրջանակներում:

Անվտանգության բաղադրիչների ամրապնդումը ենթադրում է Հայաստանի ակտիվ գործունեություն բոլոր ձևաչափերով, գործնական ներգրավում ունենալով ինչպես բազմակողմ մասնավորապես



ՀԱՊԿ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ, այնպես էլ՝ Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Հունաստան և այլ երկկողմ ուղղություններով:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչ է ակտիվ մասնակցությունը միջազգային կազմակերպություններում, ինչը հատկապես կարևորվում է միջազգային կազմակերպությունների դերի օրըստօրե նկատվող աճով: Այս կապակցությամբ առաջնային է դառնում աշխատանքների ակտիվացումը այն կազմակերպություններում, որոնցում հնարավոր է արդյունավետ և նպատակասլաց քարոզչության անցկացումը և համարժեք դիվիդենտների ձեռքբերումը:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով որոշ երկրների կողմից միջազգային ասպարեզում և կազմակերպություններում տարվող հակահայկական քարոզչության կտրուկ աճը, անհրաժեշտություն է ծագում վարելու ակտիվ և օպերատիվ քարոզչական և հակաքարոզչական քաղաքականություն՝ իրականացնելով դրանից բխող կոնկրետ միջոցառումներ՝ միջազգային կոնֆերանսների կազմակերպում, արտասահմանյան թերթերում հոդվածների հրատարակումներ և թեմատիկ գրականության թողարկումներ և այլն :

### **Կրթություն**

Կրթության ոլորտի հիմնական գերակայություն է համարվում տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթությունը՝ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Հանրակրթության ոլորտի հիմնական գերակայություն են շարունակում մնալ՝  
-կրթության բովանդակային բարեփոխումը, նորմատիվ դաշտի բարելավումը,  
-աշխատավարձերի բարձրացումը,  
-մանկավարժական կադրերի վերապատրաստումների իրականացումը, մեթոդական սպասարկումը,

-վերապատրաստումների իրականացումը մարզերում,  
-12-ամյա կրթության և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցումն ապահովող նորմատիվային փաստաթղթերի և այլ նյութերի մշակումն ու ներդրումը,  
-առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ներդրումը,  
-գնահատման նոր համակարգի ներդրումը :

Հանրակրթության ոլորտում շարունակում է գերակայություն համարվել հանրակրթության անբաժանելի մաս կազմող հատուկ կրթության համակարգը, որի բարեփոխումների ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

-ներառական դպրոցների ցանցի զարգացում,  
-հատուկ հաստատությունների ընդունելության համակարգի բարեփոխում,  
-հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավում :

Հատուկ ուշադրություն է պահանջում Մփյուռքի հայկական դպրոցները դասագրքերով ապահովման խնդիրը: Այն հանդիսանում է Հայաստան-Մփյուռք քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:

2008 թվականին Հայաստանում նախատեսվում է 50 սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում, ինչպես նաև 70 սփյուռքահայ դիմորդների ընդունելությունը պետական ԲՈՒՀ-եր:

2008 թվականին նախատեսվում է տարբեր տեսակների արտադարձական կրթական հիմնարկների զարգացում, կրթության բովանդակության բարելավում, ըստ հետաքրքրությունների դարձակաճանգի պահանջարկի բավարարում, լրացուցիչ ծառայությունների ոլորտի ընդլայնում:

Լուծելով հիմնական ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները՝ պետությունը բավարար հիմքեր է ստեղծում մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկվածության մակարդակների բարձրացման համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով հավասարության խնդիրներին:

Նշված ոլորտում գերակայություն են դիտվում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, Լիսաբոնի կոնվենցիայի պահանջների ապահովումը, Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրման գծով հիմնական ուղղությունների իրականացումը՝

- համընթեռնելի և համադրելի բարձրագույն կրթական փաստաթղթերի ներդրում,
- որակավորումների ազգային համակարգի ստեղծում,
- ՀՀ կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվության պատրաստում և տրամադրում շահառուներին:

Կարևորելով մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) դերը՝ սահմանվել են համակարգի զարգացման հետևյալ գերակայությունները.

-կարողությունների վրա հիմնված մասնագիտական կրթության և ուսուցման չափորոշիչների մշակման, կիրառման և թարմացման (արդիականացման) համար նորմատիվային դաշտի ստեղծում,

-մասնագիտական կրթության և ուսուցման իրականացման գնահատման և որակի մոնիտորինգի համար նորմատիվային դաշտի ստեղծում:

2008 թվականին նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կողովի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն կտա ապահովել նշված ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների իրականացումը, համակարգի արդյունավետության բարձրացումը:

Մասնավորապես նախատեսվում է՝

-2008 թվականին՝ բարձրացնել ուսուցիչների, վարչական անձնակազմի, ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձերը,

- ապահովել տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով,
- ապահովել դպրոցները ուսումնական գույքով,
- նախատեսել միջոցներ հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար:

Հանրակրթության ոլորտում արդյունավետության բարձրացման ուղղությամբ կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

- աշակերտ/ուսուցչական դրույք և աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունների բարձրացում,
- կրթական չափորոշիչների փոփոխություն, ուսուցման նոր մեթոդների ներդրում, ուսումնական նոր նյութերի տրամադրում:

### **Գիտության ոլորտ**

Հիմք ընդունելով 2007 թվականի փետրվարի 1-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած և հուլիսի 11-ին ՀՀ վարչապետի կողմից վավերացված «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները» 2008 թվականին նախատեսվել է՝

-պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական բոլոր ծրագրերում և թեմաներում մասնակցող գիտնականների աշխատավարձի բարձրացում,

-գիտության մեջ որպես որակի խթանիչ գիտական աստիճանի համար գիտական աշխատողներին տրվող հավելավճարի բարձրացում՝ գիտությունների դոկտորներին 20.0 հազար դրամ և գիտությունների թեկնածուներին 10.0 հազար դրամ,

-գիտական ներուժի արդյունավետ վերարտադրության նպատակով ասպիրանտների կրթաթոշակի ավելացում, հասցնելով ՀՀ նվազագույն աշխատավարձի մակարդակին:

### **Առողջապահություն**

Առողջապահության ոլորտի գործունեության բարելավման և զարգացման քաղաքականության հիմքում որդեգրվում են բնակչության առողջության պահպանման և բարելավման հստակորեն սահմանված և միջազգայնորեն ընդունված հետևյալ հիմնարար արժեքները՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, առողջության պահպանման գործում կառավարության և անհատների նոր դերի սահմանում, այդ գործընթացում պատասխանատվության տարանջատում, սովորաբար գործունեության վերացում, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում և, հնարավորության դեպքում, լրացուցիչ միջոցների ընդգրկում:

Ոլորտում իրականացվող բարեփոխումները անդրադառնում են համակարգի կազմակերպական ու կառուցվածքային վերափոխումներին, օրենսդրական դաշտի բարելավմանը, առողջապահության ֆինանսավորման համակարգի կատարելագործմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, սեփականության բազմաձևության խթանմանը, արտաքին ու ներքին կապիտալի ներհոսքին առողջապահության ոլորտ, կրթական համակարգի արդիականացմանը, բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը և այլն:

Առողջապահության ոլորտի զարգացման դիմամիկ քաղաքականության ապահովման նպատակով կարևորագույն հիմնախնդիր է դիտվում բնագավառի օրենսդրական դաշտի բարելավումը: Այդ նպատակով առաջնային է դիտարկվում ոլորտի գործունեությունը հիմնականում կանոնակարգող «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Բուժօգնության համակարգի զարգացումը շարունակաբար ուղղված է լինելու նրա մատչելիության, որակի բարելավման, կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործմանը, այդ թվում՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն) իրականացմամբ, բուժօգնության ստանդարտների աստիճանական ներդրմանն, որակի բարելավմանը և վերահսկմանը, բուժօգնության տարբեր օղակների միջև փոխկապակցվածության աստիճանի բարձրացմանը:

Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականության գերակայող ուղղություններն են.

- Բնակչության մատչելի և որակյալ բժշկական օգնության ապահովումը,
- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,
- Բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը,
- Մոր և մանկան առողջության պահպանումը,

-Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը,

-Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից բուժվողների բուժօգնության ապահովումը,

-Գեղորայքային ապահովումը,

-Համակարգի կապիտալ ակտիվների պահպանումը ու ոլորտում նոր հզորությունների գործարկումը,

-Բժշկական կրթական համակարգի կատարելագործումը,

-Պետական ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման ու ֆինանսական այլ հոսքերի արդյունավետ կառավարման ապահովումը :

Առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի շարունակական ավելացման պայմաններում խնդիր է դրվում առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը, ոլորտում առկա ֆինանսական հոսքերի կանոնակարգումը և բուժօգնության որակի ու մատչելիության բարձրացումը:

Ներդրվում է ընտանեկան բժշկության համակարգը, որն աստիճանաբար կփոխարինի գույություն ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համակարգը: Առաջիկա տարիներից կշարունակվի առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացմանն ուղղված ռազմավարության քաղաքականությունը: Բնակչության անապահով խավի համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և աղքատության հաղթահարման համատեքստում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժ օգնության առաջնային օղակի վրա: Աղքատների համար բուժ-օգնության մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել հասարակության բոլոր ինստիտուտների մասնակցությունը և համակարգված գործողությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվելու մարզային և գյուղական մակարդակում բուժօգնության առաջնային համակարգի դերի ամրապնդմանն ու գործունեության բարելավմանը, ինչպես նաև գյուղական բնակչության առողջության առաջնային պահպանմանը, բժշկական ծառայությունների մատչելիության և դրանց որակի բարձրացման ապահովմանը: Այդ նպատակին ուղղված առաջին քայլերից է արդեն սկսված գյուղական ամբուլատորիաների վերանորոգումն ու ժամանակակից սարքավորումներով վերազինումը:

Անհրաժեշտ է վերահաստատել կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը ազգային մակարդակով՝ ապահովելով նրանց առողջության և սնուցման բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շարունակական իրագործումը, այդ թվում՝ կրծքով սնուցման խրախուսումը, հղիների նախածննդյան խնամքի և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրումը:

Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:

Շարունակական գործընթացի համատեքստում առողջապահության բյուջեի սոցիալական ուղղվածության բնորոշումը կապահովի երկրում աղքատության աստիճանը որոշող հատուկ համակարգի ներդրմամբ պայմանավորված բուժօգնության հասցեագրված ֆինանսավորման իրականացումը:

Գեղային և տեխնոլոգիական քաղաքականության հիմնական ուղղվածությունը լինելու է դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը:

Սոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով (տուբերկուլոզ, հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ և այլն) տառապող հիվանդներին դեղորայքով անխափան և շարունակական ապահովման համար նախատեսված է համապատասխան դեղամիջոցների ձեռքբերում, որոնք կարիքավորներին կտրամադրվեն պոլիկլինիկաների (դիսպանսերների պոլիկլինիկական բաժանմունքների) միջոցով և նրանց հսկողության ներքո:

Բուժկազմակերպությունների բժշկական սարքավորումների վերազինման, բուժտեխնիկայով հագեցվածության, բուժական և ախտորոշման գործընթացի բարձրացման նպատակով նախատեսվում է բժշկական ժամակակից սարքավորումների ձեռքբերում, որոնք հավասարաչափ կբաշխվեն մարզերում գործող թե՛ ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի, թե՛ հիվանդանոցային համակարգի բոլոր բուժաստատությունների միջև:

Բժշկական կրթության, գիտության և կադրային բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու կադրային ներուժի օպտիմալացումը, բժշկական մասնագիտական կադրերով հանրապետության ողջ տարածքում համաչափ հագեցվածության ապահովումը, բժշկական կրթության կառուցվածքի և ստանդարտների մոտեցումը միջազգային չափանիշներին, բժշկագիտության ներուժի արդյունավետ կիրառման համար պայմանների ստեղծումը:

#### **Սոցիալական պաշտպանության ոլորտ**

Ոլորտում 2008 թվականին քաղաքականությունը միտված կլինի բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների լուծմանը՝ ապահովելով սոցիալապես խոցելի խմբերի առավել արդյունավետ պաշտպանությունը և սոցիալական աջակցության մատչելիությունը: Մշտական ուշադրության կենտրոնում կլինեն հաշմանդամների, տարեցների, կանանց ու երեխաների հիմնահարցերը, ինչպես նաև բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման, արժանապատիվ աշխատանքի, դրա դիմաց համարժեք վարձատրության, աշխատանքով պայմանավորված եկամուտների ավելացման, սոցիալական իրավունքի լիարժեք իրացման պայմանների ստեղծման, սոցիալական աջակցության հասցեականության մեծացման, կենսաթոշակների ու նպաստների շարունակական աճի ապահովման խնդիրները: Լուրջ քայլեր կձեռնարկվեն սոցիալական պաշտպանության համակարգի և նրա գործունեությունը կանոնակարգող նորմատիվ-իրավական դաշտի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ: Կշարունակվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենանալով սոցիալական պաշտպանության համակարգը առավել համահունչ դարձնել եվրակառույցների հիմնարար սկզբունքների վրա հարսխված չափորոշիչներին:

Զբաղվածության բնագավառում նախատեսվում է աշխատանքներ իրականացնել՝ ուղղված բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովմանն ու աշխատաշուկայում լարվածության թուլացմանը: Կմշակվի բնակչության զբաղվածության ռազմավարությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձը, ինչպես նաև բնագավառի ներքին առանձնահատկությունները: Նորաստեղծ «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի» գործունեությունը նպատակաուղղված կլինի աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանը՝ աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան՝ մասնագիտական կողմնորոշման իրականացմանը, 14-16 տարեկան ան-

ձանց մասնագիտությունների ընտրության վերաբերյալ խորհրդատվության տրամադրմանը, կարողությունների, ունակությունների և հակումների բացահայտմանը:

Աշխատանքային իրավահարաբերությունների բնագավառի օրենսդրությունը 2008 թվականի ընթացքում կհամապատասխանեցվի Եվրամիության ստանդարտներին, ինչը կնպաստի աշխատանքի պայմանների բարելավմանը՝ աշխատողների անվտանգության, առողջության և իրավունքների պաշտպանությանը, աշխատանքի վայրում ռիսկայնության գործոնի նվազեցմանը:

Աշխատանքի վարձատրության բնագավառում քաղաքականությունը կուղղվի բնակչության դրամական եկամուտների բարձրացմանը:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում կշարունակվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքը մանկատներում, ապահովելով նրանց դաստիարակության, ուսման, մտավոր և ֆիզիկական զարգացման համար նպաստավոր պայմաններ:

Կշարունակվի «Պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է շրջանավարտների մասնագիտական կողմնորոշումը և ուսուցումը, բնակարանների և անհրաժեշտ գույքի գնումը, սոցիալական պաշտպանությունը և հասարակությունում նրանց ինտեգրումը:

Կիրականացվեն երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. Ազգային ծրագրերով, ինչպես նաև դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010թթ. ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները:

Կշարունակվի «Պետական աջակցություն երեխաների սոցիալական հոգածության կենտրոններին» ծրագիրը Երևանի Աջափնյակ համայնքի և Գյումրու երեխաների ցերեկային կենտրոններում:

Լռու մարզում կշարունակվի մանկատների բեռնաթափման և սոցիալական որբության կրճատման փորձնական ծրագիրը, որի նպատակն է ապահովել երեխաների վերադարձը հարազատ միջավայր և վերականգնել նրանց կապերն իրենց ընտանիքների ու համայնքների հետ:

2008թ. նախատեսվում է իրականացնել 3 օբյեկտների հիմնանորոգում և 2 օբյեկտների շինարարություն՝ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի նոր ննջարանային և Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցում, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հանրակացարանային մասնաշենքի, «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վետերան օթևան» կացարանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ ԲՍՓ գործակալության մանկական և հոգեբուժական մասնագիտացված ԲՍՓ-ների շենքի հիմնանորոգում, ինչը հնարավորություն կընձեռնի համապատասխան ծառայությունները ավելի արդյունավետ և մեծ ծավալով իրականացմանը:

Կշարունակվի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակարանների տրամադրում» ծրագիրը:

2008 թվականին կսկսվեն իրականացվել.

-«Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության իրականացման նպատակով պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող

ՊՈԱԿ-ներին» ծրագիրը, ըստ որի Կապանի թիվ 1, Երևանի Պ.Գուրյանի անվան թիվ 10, Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1, Վանաձորի թիվ 2, Բյուրեղավանի որբ, ծնողական խնամքից զրկված երեխաների թիվ 1, Գյումրու թիվ 2 և Դիլիջանի որբ, ծնողական խնամքից զրկված երեխաների թիվ 1 հատուկ դպրոցները կդառնան երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություններ:

-«Պետական աջակցություն «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի չորս ցերեկային կենտրոններին» ծրագիրը, որով կենտրոններում կմատուցեն երեխաների զարգացմանն ու ընտանիքների հզորացմանն ուղղված ծառայություններ:

-«Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման հետ կապված ծախսեր» ծրագիրը: Նախատեսվում է խնամատար ընտանիքներում տեղավորել 25 երեխա, որից 5-ը՝ 0-6 տարեկան, 20-ը՝ 6-ից բարձր:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում կշարունակվեն հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակությունում նրանց ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքները:

Կիրականացվեն դեռևս 2005 թվականի նոյեմբերի 3-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած՝ հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության միջոցառումները՝ հաշմանդամների պրոթեզավորման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման գործընթացը, կիրականացվի նաև հաշմանդամների աչքի պրոթեզավորման և ձայնալարերը հեռացրած հաշմանդամներին ձայնաստեղծ սարքերով ապահովումը, ձեռք կբերվեն հատուկ տառատեսակներով գրքեր և տետրեր, կձայնագրվեն «Խոսող գրքեր»:

Կշարունակվեն հաշմանդամների բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքները, մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների իրականացում Վարդենիսի տուն-ինտերնատին կից ցերեկային կենտրոնում:

Կիրականացվեն նաև հետևյալ նոր ծրագրերը՝ «Պետական աջակցություն տեսողությունից հաշմանդամ անձանց «Արև» համակարգով ուսուցանելու և համակարգչային տեխնիկայով ապահովելու համար» և «Պետական աջակցություն «Փրկություն» հասարակական կազմակերպության հաշմանդամ երիտասարդների սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնին»:

Կշարունակվեն միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման աշխատանքները՝ պետության լրիվ խնամքի ներքո գտնվող միայնակ ծերերի ու հաշմանդամների խնամքը տուն-ինտերնատներում: 2008 թվականին ևս կշարունակվի տարեցներին և հաշմանդամներին համայնքահեն ծառայությունների մատուցումը «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով:

Կշարունակվեն աշխատանքներն 50 անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով ապահովման ուղղությամբ:

Կշարունակվի նաև բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային շինարարության, տան վերանորոգման կամ բնակարան ձեռք բերելու համար արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկերի, ինչպես նաև «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով նախատեսված միանվագ դրամական փոխհատուցումների տրամադրման գործընթացը:

Սոցիալական աջակցության բնագավառում 2008 թվականին ևս հրատապ է լինելու բնակչության սոցիալական աջակցության, մասնավորապես ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության բարձրացման հարցը: Կշարունակվի այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ և բազմազավակ ընտանիքներին, մասնավորապես, ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքներում երրորդ և ավելի երեխա ծնվելու կապակցությամբ յուրաքանչ-յուր երեխայի համար միանվագ նպաստի չափը կավելանա 100.0 հազ. դրամով ՀՀ 2007թ. պետական բյուջեով հաստատված 200.0 հազ. դրամի դիմաց:

2008 թվականից պետական նպաստների համակարգ կտեղափոխվի նաև Հայաստանի Հանրապետության գոհված ազգային հերոսների ընտանիքներին տրվող նպաստը:

Սոցիալական պաշտպանության և կենսաթոշակային ապահովության բնագավառում առաջնահերթ խնդիր է մնում կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումը: Այդ ծրագրի շրջանակներում 2008 թվականի հունվարի 1-ից նախատեսվում է 60 տոկոսով բարձրացնել միջին ամսական կենսաթոշակի չափը՝ 2012 թվականին աղքատության ընդհանուր գիծը 1.5 անգամ գերազանցող միջին կենսաթոշակ ապահովելու նպատակով :

Համապատասխան քայլեր կձեռնարկվեն անձնավորված հաշվառման համակարգի կատարելագործման ուղղությամբ:

Կշարունակվեն սոցիալական քարտերի համակարգի ամբողջական ներդրման աշխատանքները, որի շրջանակներում՝

-կկատարելագործվեն սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական բազաները, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել տեղեկատվության ինքնաշխատ փոխանակություն,

-քայլեր կձեռնարկվեն էլեկտրոնային տեղեկատվությունը պաշտոնական համարելու և դրա հիման վրա շահառուներին սպասարկելու կառուցակարգեր սահմանելու ուղղությամբ,

-քայլեր կձեռնարկվեն տեղեկատվության ինքնաշխատ փոխանակությունն ապահովող համակարգչային ծրագրեր և մեխանիզմներ մշակելու և ներդնելու ուղղությամբ:

Շարունակական բնույթ կկրի նաև ՀՀ օրենսդրության համաձայն սոցիալական քարտերի տեղեկատվական բազայի վարումը, քաղաքացիներին սոցիալական քարտեր և սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքներ հատկացնելը:

### **Բնակչության միգրացիայի և փախստականների ոլորտ**

Կշարունակվի հասարակության մեջ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած փախստականների ինտեգրման գործընթացը: Այդ ճանապարհին առկա հիմնական խնդիրներից իր լուծման վճռական փուլ կմտնի փախստականների բնակարանային ապահովության հիմնահարցը և այդ նպատակով կշարունակվի ՀՀ կառավարության կողմից 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված համապատասխան ծրագրի իրականացման աշխատանքները: Խնդրի լուծման համար կօգտագործվեն նաև միջազգային կազմակերպությունների և դոնոր կազմակերպությունների ֆինանսական հնարավորությունները: Ծրագրի իրականացման արդյունքում առաջիկա տարիներին ավելի քան 3000 ամենակարիքավոր փախստական ընտանիքներ կապահովվեն մշտական օթևանով:

Կմշակվի և կներդրվի օտարերկրյա պետություններում բնակվող մեր հայրենակիցների հայրենադարձությունը խթանող համակարգ, որը հնարավորություն կընձեռի այդ անձանց էլեկտրոնային կապի հաղորդուղիներով անմիջականորեն կապվել Հայաստանի պետական կառավարման համապատաս-



խան մարմինների հետ: Այդ համակարգի մշակման և կիրառման նպատակով կձևավորվի վերադարձի գործընթացներին առնչվող պետական մարմինների ներկայացուցիչներից կազմված կառույց:

Կկնքվեն միջպետական պայմանագրեր կողմերի տարածքներում անօրինական կարգավիճակում գտնվող անձանց վերադարձի, ընդունման և տարանցման կազմակերպման վերաբերյալ (ռեադմիսիոն պայմանագրեր):

Կմշակվեն և կիրականացվեն Հայաստանի Հանրապետությունից ծնունդ առնող անօրինական միգրացիայի կանխարգելման, արտերկրներում անօրինական կարգավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ռեինտեգրացիային աջակցման ծրագրեր: Նշված ծրագրերի իրականացման համար բանակցություններ կվարվեն միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա պետությունների հետ, նրանցից ֆինանսական, տեխնիկական, խորհրդատվական հնարավոր աջակցություն ստանալու նպատակով:

Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման արդյունավետ իրականացման նպատակով կապահովվի ՀՀ բնակչությանը միգրացիոն հիմնահարցերի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության տրամադրումը:

Օրենսդրական դաշտի կատարելագործմամբ և համապատասխան ծրագրերի մշակմամբ ու իրականացմամբ հետևողական պայքար կտարվի մարդկանց ապօրինի փոխադրումների ու առևտրի (թրաֆֆիքինգ) դեմ:

Նպատակաուղղված քայլեր կիրականացվեն միջազգային աշխատաշուկային Հայաստանի Հանրապետության քաղաքակիրթ ինտեգրացման համար: Ուշադրության կենտրոնում կլինեն աշխատանքային էմիգրացիայի երևույթի օրենսդրական կանոնակարգման, աշխատանքային էմիգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանության իրականացման հարցերը:

Օրենսդրորեն կկարգավորվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանից ելքի և Հայաստան մուտքի հետ կապված հարաբերությունները:

Կկատարելագործվի օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հուճանհիտար նկատառումներով Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող պաշտպանության համակարգը, այն համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

### **Մշակույթի ոլորտ**

Մշակույթի ոլորտի հիմնական խնդիրներն առնչվում են անհատի և հասարակության ստեղծագործական ներուժի խթանման, մշակույթի ոլորտում պետական աջակցության ցուցաբերման, իրավական հիմքերի մշակման, պատմամշակութային ժառանգության պահպանման, արդի և ժողովրդական արվեստի զարգացման, մշակութային նշանակալից նվաճումների խրախուսման, արտերկրում հայկական մշակույթն արժանավայել ներկայացնելուն ուղղված ծրագրերին, մշակութային կրթության և գիտության կատարելագործման, ազգային փոքրամասնությունների սոցիալ-մշակութային ներդաշնակ զարգացման և միջմարզային մշակութային համագործակցության հետ:

Մշակույթի ոլորտին նախատեսված հատկացումներն ուղղված են՝

-քաղաքացիական հասարակության ձևավորմանը և մշակույթի դերի բարձրացմանը,

-մշակութային անշարժ հուշարձանների, մշակութային արժեքների, այդ թվում՝ ոչ նյութական արժեքների պահպանմանը,

- մշակութային կրթության և գիտության համակարգմանը և նոր ծրագրերի ու մեթոդների ներդրմանը, կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը,
  - համաշխարհային մշակութային գործընթացներին ազգային մշակույթի համաշխարհայնացմանը /ինտեգրմանը/,
  - մշակութային փոխանակությունների նոր ձևերի և ուղղությունների յուրացմանը,
  - Հայաստանի Հանրապետության մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը,
  - համագործակցությանը լիազորված պետական մարմնի, պետական տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև,
  - համատեղ մշակութային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, դիտանցումային /մոնիտորինգային/ գործընթացի և մասնագիտական գործուղումների կազմակերպմանը,
  - համագործակցությանը հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ ստեղծագործական և ազգային փոքրամասնությունների միությունների հետ:
- ՀՀ մշակույթի ոլորտում 2008 թվականի պետական բյուջեի հատկացումները կուղղվեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորման, մշակութային միջոցառումների իրականացման, ինչպես նաև կապիտալ ծախսերի իրականացման համար:
- Գրադարանների ոլորտում սուբսիդիաների հատկացումները հիմնականում ուղղված են լինելու գրադարանային աշխատողների աշխատանքի վարձատրությանը, գրադարանային հավաքածուների, ազգային մատենագիտության տվյալների էլեկտրոնային շտեմարանի պահպանությանն ու համալրմանը, տեղեկատվական-գրադարանային ավտոմատացված համակարգերի գործածությանը, տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի ֆոնդերի, ազգային մատենագիտության, հրատարակությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների կազմմանն ու հրապարակմանը, հայկական տառատեսակների պահպանությանն ու նոր տառատեսակների մշակմանը:
- Գրադարանների համար 2008 թվականին նախատեսված միջոցները ուղղվելու են 16 գրադարանների և ՀՀ ազգային գրապալատի սուբսիդիաների հատկացմանը և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:
- Թանգարանների ոլորտում սուբսիդիաների հատկացումները հիմնականում ուղղված են լինելու թանգարանային աշխատողների աշխատանքի վարձատրությանը, թանգարանային հավաքածուների համալրմանը, ամբողջացմանը, հետագա պահպանվածության ապահովմանը, հրապարակմանը, թանգարանային առարկաների կոնսերվացմանը և վերականգնմանը, թանգարանային նոր մշտական ցուցադրությունների, ցուցահանդեսների կազմակերպմանը, թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների շարունակության իրականացմանը:
- Թանգարանների համար նախատեսված միջոցներն ուղղվելու են 39 թանգարանների սուբսիդիաների հատկացմանը և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը: Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների համար նախատեսված միջոցներն ուղղվելու են 4 կազմակերպություններին սուբսիդիայի հատկացմանը:
- Այլ մշակութային կազմակերպությունների համար նախատեսված միջոցներն ուղղվելու են «Տեղեկատվական-վերլուծական և հասարակայնության հետ կապերի կենտրոն», «Ժողովրդական ստեղծագործությունների և արհեստագործության կենտրոն», «Մշակութային արժեքների փորձագիտական

կենտրոն», «Հայաստանի ազգային արխիվ» և «Երևանի կենդանաբանական այգի» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորմանը և տեխնիկական վերազինմանը:

2008 թվականին Ժողովրդական ստեղծագործությունների և արհեստագործության կենտրոնը շարունակելու է հայոց ավանդական մշակութային ժառանգության հավաքման, պահպանման և հանրահռչակման ծրագրի և շտեմարանի ստեղծման աշխատանքները:

Արվեստի (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ) համար 2008 թվականին նախատեսված միջոցներն ուղղվելու են թատերահամերգային կազմակերպությունների սուբսիդիաների հատկացմանը, տեխնիկական վերազինմանը և մշակութային միջոցառումների իրականացմանը:

2008 թվականին արվեստի ոլորտում պետական բյուջեի միջոցները առաջին հերթին կուղղվեն.

-թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի, ժողովրդական արվեստի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը, նոր ստեղծագործական պատվերների՝ երաժշտական, կերպարվեստի և դրամատիկ ստեղծագործությունների ձեռքբերմանը, թատերական փառատոների, համաժողովրդական տոնակատարությունների անցկացման աջակցմանը, ստեղծագործական աշխատողների աշխատանքի և զբաղվածության համապատասխան պայմանների ստեղծմանը,

-մշակութային միջոցառումների, մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, մշակույթի, հասարակական-քաղաքական գործիչների և մշակութային նշանավոր իրադարձությունների հորելյանների կազմակերպմանն ու անցկացմանը,

-Հայաստանի Հանրապետության վավերացրած միջպետական համաձայնագրերին, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման ծրագրերին համապատասխան՝ սփյուռքի հետ մշակութային հարաբերությունների զարգացմանը, արտերկրում հայ արվեստի ներկայացմանը,

Սուբսիդիաների տրամադրումը նպատակ ունի ապահովել թատրոնների, համերգային կազմակերպությունների բնականոն գործունեությունը՝ որպես հայ մշակույթի ինքնատիպության, ազգային ինքնագիտակցության, լեզվի պահպանման և ամրապնդման միջոց:

Կինոարվեստի ոլորտին ուղղված հատկացումները նպատակ ունեն միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ աջակցություն ապահովել հայրենական կինոարտադրության, միջազգային կինոփառատոներին և կինոշուկաներին ՀՀ մասնակցության, մանուկների և պատանիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանմանը: Կինեմատոգրաֆիայի ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղված են Հայաստանի ազգային կինոկենտրոնի պահպանմանը, կինոնկարների արտադրությանը, կինոշուկաներին և կինոփառատոներին մասնակցության ապահովմանն ու կինո - ֆոտո - ֆոնո հավաքածուի պահպանմանը (հայկական ֆիլմերի նոր պատճենների ձեռք բերում), վավերագրական կինոնկարների թվայնացմանը:

Պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղված են ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, վավերագրման, վկայագրերի, պետական ցուցակների, պահպանական գոտիների վերականգնման և բարեկարգման, տարածքների նախագծերի կազմման, պատմամշակութային անշարժ ժառանգության, գիտատեղեկատու շտեմարանի կազմման և հուշարձանների վերականգնման աշխատանքների իրականացմանը:

Գրահրատարակչության և տեղեկատվության ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղված են լինելու հանրագիտարանային, մանկական, գիտահանրամատչելի, հորելյանական և այլ գրականության, թերթերի, ամսագրերի հրատարակման իրականացման ապահովմանը, տեղեկատվության ձեռքբերմանը, պահպանման և արխիվացման համար պայմանների ստեղծմանը:

2008 թվականին կշարունակվի համահայկական հրատարակչական դաշտի ձևավորումը, սփյուռքի հետ ակտիվ համագործակցությունը, Հայաստանի Հանրապետությունում հրատարակված գրքերի տարածումը և արտերկրում հայկական գրքարվեստի քարոզչությունը, Հայաստանում լույս տեսած գրքերի ընթացիկ լիակատար կատալոգների հրատարակումը:

**Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտ**

Ոլորտի 2008 թվականի ծրագրերի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը.

- բնագավառի գործունեությունն ապահովող նոր իրավական ակտերի մշակում և ընդունում,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման պետական քաղաքականության կատարելագործում՝ ՀՍՕԿ-ին, մարզաձևերի հանրապետական ֆեդերացիաներին, հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպություններին, նախարարության ենթակայության և հասարակական մարզական կազմակերպությունների մարզադպրոցներին, Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջներին ֆինանսական աջակցության ցուցաբերում,
- բնակչության առողջության ամրապնդում, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի կատարելագործում, անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ձևավորում, ակտիվ հանգստի կազմակերպում,
- ընտանիքների կենցաղում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ներդրում,
- հանրապետության մարզերում ազգային մարզաձևերի վերականգնում,
- հաշմանդամների տարբեր խմբերի համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծում,
- նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում, Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և ՀՀ Ձինված ուժերում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում,
- մանկապատանեկան սպորտի մասսայականության ապահովում
- միջազգային մարզական ասպարեզում հանրապետության վարկանիշի բարձրացման ապահովում,
- մարզաձևերի հանրապետական առաջնությունների և ուսումնամարզական հավաքների կազմակերպում, մարզիկների վարպետության բարձրացում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին և Պարալիմպիկ խաղերին հանրապետության մարզիկների նախապատրաստում,
- հանրապետության հավաքական թիմերի անդամների բժշկական վերահսկողության և վերականգնողական միջոցների, բժշկակենսաբանական, հոգեբանական և այլ հետազոտությունների իրականացում, անհրաժեշտ մարզագույքով և հանդերձանքով ապահովում,
- աշխարհի, Եվրոպայի և օլիմպիական խաղերի մրցանակակիրներին և նրանց մարզիչներին սահմանված կարգով դրամական պարգևատրումների իրականացում, նրանց նյութական և սոցիալ-տնտեսական պայմանների հետագա բարելավում,

-պետական ծրագրերով, անկախ գերատեսչական պատկանելիությունից, նպաստել մարզա-կառույցների վերանորոգման աշխատանքներին,

-Եվրախորհրդի սպորտի զարգացման կոմիտեի կողմից հրատարակված մեթոդական գրականու-թյան ու փաստաթղթերի՝ «Եվրոֆիտ» թեստերի, սպորտի Եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերի և այլ նյութերի թարգմանություն, տպագրում, բազմացում և տարածում,

-հանրապետական, մարզային և տարածաշրջանային սեմինար-խորհրդակցությունների և կլոր սեղանների կազմակերպում, հանրությանը և մարզաշխատողներին Եվրախորհրդի կողմից հրատա-րակված մեթոդական գրականությանը ծանոթացման և դրանց գործնական կիրառման ապահովում,

-հանրապետության մարզչական կադրերի, մարզադպրոցների տնօրենների վերապատրաստման և ատեստավորման գործընթացի իրականացում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրագործվող բարեփոխումները կնպաստա-կառողվեն մարզակառույցների արդյունավետ շահագործմանը, մարզական միջոցառումների մասնա-կիցների անվտանգության ապահովմանը:

### **Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտ**

Ոլորտի նպատակներն են խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում), զարգացնել երիտա-սարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները, նպաստել երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը, ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ, կրթված և հայ-րենասեր երիտասարդություն:

Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտի ծախսային ծրագիրը նախատեսում է ապահովել ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի» և ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարության» դրույթներում ամրագրված առաջնահերթ խնդիրների լուծման շարունակականությունը՝

-երիտասարդական ոլորտի իրավական դաշտի ապահովում՝ ոլորտի գործունեությունը կարգա-վորող օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման միջոցով,

-երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում և նրանց գործունեության պետական աջակցություն,

-երիտասարդության հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացում, ազատ ժաման-ցի ակտիվ և նպատակային կազմակերպում,

-սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրում և դրանց լուծմանն ուղղված միջոցա-ռումների իրականացում,

-երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակ-ցության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում,

-մարզերում երիտասարդական պետական քաղաքականության զարգացում (մարզային երիտա-սարդական կենտրոնների գործունեության ապահովում, գյուղական և սահմանամերձ շրջանների երի-տասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),

-երիտասարդների լիակատար ինքնադրսևորման համար պայմանների ստեղծում, շնորհալի և տաղանդավոր երիտասարդներին պետական աջակցություն,

-երիտասարդության անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում,

-միջազգային և համահայկական երիտասարդական համագործակցության զարգացում:

### **Բնապահպանության ոլորտ**

Բնապահպանության ոլորտում 2008 թվականին կառավարության կարևորագույն և գերակա նպատակներն են լինելու՝

-երկրում բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,

-հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը,

-բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,

-ընդերքի պահպանությունը, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովումը,

-շրջակա միջավայրի վիճակի և հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների, ատոմային էներգիայի անվտանգ օգտագործումը, բնագավառի բարձրորակ մասնագետների պատրաստման ապահովումը,

-շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը, թափոնների կառավարումը:

Վերջիններիս իրականացումն ապահովող աշխատանքները և միջոցառումները կիրականացվեն հետևյալ հիմնական ուղղություններով և ծրագրերով՝

I. «Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացվող համապատասխան միջոցառումների կատարումը նպատակաուղղված է լինելու հանրապետության տարածքում օգտակար հանածոների նոր երևակումների հայտնաբերմանը և երկրաբանական մի շարք կարևոր հիմնահարցերի պարզաբանմանը նպատակաուղղված երկրաբանական, հիդրոերկրաբանական ու երկրաֆիզիկական ուսումնասիրություններին և քարտեզագրմանը, այդ թվում իրականացվելու են՝

«Երկրաբանահետախուզական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում՝ Գեղամա լեռների հյուսիսային և արևմտյան ստորոտների 1:50000 մասշտաբի երկրաբանական հանույթի, Երևան քաղաքի և նրա մերձակա տարածքներում 1:50000 մասշտաբի երկրաբնապահպանական հետազոտությունների և քարտեզագրման, ՀՀ տարածքի Էկզոգեն (արտածին) երկրաբանական պրոցեսների (սողանքների) մոնիտորինգի վարման և դրանց կադաստրի կազմման, «Կովկասի և հարակից տարածքների 1:1000 000 մասշտաբի երկրաբանական ատլասի կազմման և «Կովկաս-Ղրիմ Կարպատյան մարզերի երկրաբանական կառուցվածքը» նախագծի իրականացման և ՀՀ մետաղական օգտակար հանածոների երևակումների վերաբերյալ համակարգչային տեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները,

Պետական աջակցություն «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ծրագրի շրջանակներում ՀՀ-ում օգտակար հանածոների հանքավայրերի կադաստրի վարման, ընդերքի մասին տեղեկատվության պահպանման, երկրաբանահետախուզական աշ-

խատանքների պետական գրանցման և հաշվառման, օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների հաշվառման և գրանցման և այլ աշխատանքները,

Պահուստային հանքավայրերի գույքագրում ծրագրի շրջանակներում՝ Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերի պահուստային հանքավայրերի գույքագրման աշխատանքները,

Օգտակար հանածոների որակի գնահատման նպատակով հսկողական, միջնորդական և շարքային անալիտիկ աշխատանքների բարձր որակ և վստահելի տեղեկատվություն ստանալու նպատակով՝ «Անալիտիկ» ՊՓԲ ընկերության կարողությունների հզորացումը (տեխնիկական վերազինումը),

«Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին ցուցաբերվող պետական աջակցության շրջանակներում՝ ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարման աշխատանքները,

Ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակումը:

II. «Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացվելու են ներքոհիշյալ միջոցառումները և ենթածրագրերը՝

ա) Սևանա լճի համալիր ծրագրով նախատեսված համապատասխան միջոցառումների կատարումը, այդ թվում՝

-Ձկան պաշարների համալրումը,

-Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառումը,

-Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները,

բ) 2008 թվականին բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան» և «Դիլիջան» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, «Սոսիների պուրակ» պետական արգելավայր, դենդրոպարկեր և այլն) պահպանությանը, խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը:

գ) Ավարտվելու են բնության հատուկ պահպանվող տարածքների («Իջևանի», «Հերիերի նոսրանտառներ», «Մարգարտահովտի», «Ձերմուկի», «Շղեզնաձորի», «Ձերմուկի ջրաբանական» «Գորիսի», «Բողաքարի», «Գետիկի», «Բանքաի Սոճու», «Արգականի և Մեղրաձորի», «Գոռավանի ավազուտներ», «Արագածի ալպյան», արգելավայրեր, «Իջևանի», «Բերդի «Սորաններ» Ստեփանավանի «Սոճուտ», Վանաձորի «Վանաձոր» դենդրոպարկեր) վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքները:

դ) Շարունակվելու են ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման աշխատանքները:

ե) Շարունակվելու է Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային ծրագրի իրականացումը՝ ըստ հաստատված ծրագրի:

III. «Շրջակա միջավայրի պահպանության, մոնիտորինգի և տեղեկատվական վերլուծական ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացվելու են՝

-հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի աշխատանքները,

-վերոգրյալ մոնիտորինգային աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակվելու են «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման գծով միջոցառումները,

-Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրասահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի պահանջների կատարման նպատակով շրջակա միջավայրի վրա օդի հիմնական աղտոտիչների ազդեցության հետազոտում և մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ներգործությունը կարգավորող մեթոդական և իրավական ակտերի, ավտոտրանսպորտի արտանետումների չեզոքացուցիչների ներդրման, վերանորոգման, ռեգեներացիայի և սպասարկման համակարգի ներդրման ծրագրի և բնապահպանության ոլորտի տեխնիկական կանոնակարգերի մշակման աշխատանքները,

-բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման աշխատանքները,

-Ծաղկաձորի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի շինարարությունը:

IV. «Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովող պայմանների սահմանում» ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացվելու են՝

- Պետական աջակցության ցուցաբերումը «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, վերլուծության և տրամադրման, թափոնների գործածության ոլորտին վերաբերող նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակման, վերլուծական և լուսաբանական աշխատանքների կատարման նպատակներով,

- «Արտադրության և սպառման թափոնների հիմնական տեսակների գոյացման տեսակարար ցուցանիշների տեղեկատվական ձեռնարկի» և «Տարբեր ծագում ունեցող /օրգանական, քիմիական, հանքային, կոմունալ/ արտադրության և սպառման թափոնների առաջարկվող վնասազերծման և օգտագործման տեխնոլոգիաների ցանկի» մշակման աշխատանքները:

V. «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման ծառայություններ ծրագրի» շրջանակներում 2008 թվականին իրականացվելու են՝

-Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագրի կատարումը,

-Գեղարքունիքի, Տավուշի և Կոտայքի մարզերի ջրաղբյուրների գույքագրումը:

VI. «Հիդրոօդերևութաբանական ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2008 թվականին իրականացվելու են՝

-«Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ցուցաբերվող պետական աջակցության շրջանակներում՝ օդերևութաբանական, ագրոօդերևութաբանական, հիդրոլոգիական, ռադիոլոկացիոն, ակտինոմետրիական, օզոնամետրիական և աերոլոգիական և այլ դիտարկումների կատարումը,

-վերոգրյալ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակվելու է հիդրոօդերևութաբանական կայանների տեխնիկական վերազինումը:



**Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ**

2008 թվականին ՀՀ հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությանը՝ ապահովելով իրականացվող բարեփոխումների քաղաքականության հետևանքով ոլորտում նկատվող դրական միտումների զարգացումը:

- 2008 թվականին հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի
- հարկային պարտավորությունների ինքնագնահատման համակարգի զարգացմանը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացմանը,
- հարկային վարչարարությանը վերաբերող օրենսդրության կատարելագործմանը,
- հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ավելացման ապահովմանը,
- հարկային մարմնի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը,
- հարկային օրենսդրության հստակեցմանը:

Կճեռնարկվեն միջոցներ տարբեր հարկային ռեժիմներում գործող տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռի հավասարաչափ և արդարացի բաշխման ուղղությամբ, կշարունակվեն միջոցառումներ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների պետական բյուջեից հետ վերադարձման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ՝ միաժամանակ բարձրացնելով չկատարված հարկային պարտավորությունների գանձելիության մակարդակը: Կկատարելագործվեն և գործնական կիրառում կստանան հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ինքնագնահատման մեխանիզմները: Կճեռնարկվեն միջոցառումներ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման իրականացման համար:

**Հարկային վարչարարության բնագավառում**

արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կապահովեն բյուջետային եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ: Հարկային եկամուտների հավաքագրման կայունությունը և համաչափությունը հնարավոր կլինի ապահովել հարկային հսկողության բնագավառում կանխարգելիչ միջոցների կատարելագործմամբ և լայնածավալ կիրառությամբ: Այդ նպատակով կշարունակվեն ոլորտային վերլուծությունները և հարկային օրենսդրության պահանջները չկատարողների հանդեպ պատասխանատվության հարկային լծակների արդյունավետ կիրառումը: Հարկերի վճարման կամավորության սկզբունքի արմատավորմանը կնպաստեն հարկային մարմինների աշխատանքների թափանցիկությունը և հասարակության շրջանում հարկերի ճիշտ և ժամանակին վճարման վերաբերյալ քարոզչական միջոցառումներ իրականացումը:

2008 թվականին կառավարության կողմից իրականացվելիք հարկային վարչարարության առանցքային ուղղություններից կհանդիսանա չհարկվող (ստվերային) շրջանառությունների կրճատումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տնտեսության առանձին ոլորտների վրա: Տնտեսական հանցագործությունների դեմ հետևողական պայքարը կնպաստի տնտեսավարող սուբյեկտների համար մրցակցության հավասար պայմանների ապահովմանը, որը միաժամանակ կնվազեցնի ստվերում գործող կամ հարկերը թերհայտարարագրող տնտեսավարող սուբյեկտների ազդեցությունը շուկայի վրա:

2008 թվականին կշարունակվի **մաքսային ոլորտը** կարգավորող օրենսդրության հստակեցումն ու պարզեցումը, մաքսային մարմինների տեխնիկական հագեցվածության ապահովումը:

Մասնավորապես, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից կշարունակվի մաքսային օրենսդրության և ընթացակարգերի հստակեցումն ու պարզեցումը՝ հաշվի առնելով մաքսային մարմինների միջև ընդհանուր կապի ընձեռած հնարավորությունները: Մաքսային ձևակերպումների գործ-

ընթացում ընդլայնվելու է մաքսային մարմիններում ներդրված ինքնահայտարարագրման համակարգի շրջանակները: Արդիականացվելու է մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային համակարգը:

Շարունակվելու է ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսային մարմիններին վերապահված հետբացթողումային հսկողության իրականացումը: Հետբացթողումային հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է համաձայնագրեր կնքել այն երկրների մաքսային ծառայությունների հետ, որոնց հետ իրականացվում է արտաքին առևտուր:

Մաքսային մարմինների գործունեության բնագավառում առանձնահատուկ տեղ է հատկացվելու համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ մաքսային զննման և հաշվառման վայրերի ստեղծման աշխատանքներին:

Վերը նշված միջոցառումների իրականացումը հնարավորություն կընձեռի մաքսային հսկողության բնագավառում կանխարգելիչ միջոցների ներդրմանը, ինչպես նաև կբարձրացնի մաքսային վճարների հավաքագրման արդյունավետությունը:

### **Բյուջետային համակարգ**

2008 թվականին շարունակվելու են բարեփոխումները **բյուջեների կազմման բնագավառում**՝ պիլոտային պետական մարմինների մակարդակով ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման ուղղությամբ:

Նախատեսվում է շարունակել **զնումների համակարգի բարեփոխումները**, հիմնական շեշտադրումը դնելով էլեկտրոնային զնումների համակարգի ներդրման ռազմավարությամբ նախատեսված գործառնությունների կատարման վրա, ինչպես նաև ավելացնել մրցակցային հիմունքներով զնումների կատարման ծավալները:

2008 թվականին շարունակվելու է ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի իրականացումը, ինչը ենթադրում է աշխատանքներ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման ուղղությամբ:

Կառավարությունը նախատեսում է շարունակել աշխատանքները ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես օրենսդրական դաշտի մշակում՝ այդ թվում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և վերջինի կիրարկումն ապահովող այլ իրավական ակտերի հաստատում:

### **Պետական գույքի կառավարում**

Պետական գույքի մասնավորեցման ոլորտում՝

-առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի մասնավորեցման միջոցով նպաստել դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը և մրցակցային միջավայրի բարելավմանը,

-լայնորեն կիրառել պետական գույքի մասնավորեցման այն ձևերը (մրցույթ, ուղղակի վաճառք), կամ դրանց համակցությունը, որոնք նպաստում են մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ընդգրկմանն ու աշխատատեղերի պահպանմանը կամ ավելացմանը,

-պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին նպաստել պետական և համայնքային բյուջեների եկամուտների ավելացմանը:

Պետական գույքի կառավարման ոլորտում`

-բարձրացնել պետական կառավարչական հիմնարկներին ու պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի օգտագործման արդյունավետությունը,

-տնտեսական շրջանառության մեջ դնել պետական կառավարչական հիմնարկներին ու պետական ոչ առևտրային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվներից ավելի ամրացված և վերջիններիս կողմից չօգտագործվող պետական գույքը,

-պետական գույքի օտարումից ստացված միջոցների հաշվին նպաստել պետական և համայնքային բյուջեների եկամուտների ավելացմանը:

### **Անշարժ գույքի կադաստր**

2008 թվականի անշարժ գույքի կադաստրի զարգացման հիմնական ուղղություններն ու գերակայությունները հետևյալն են.

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի միասնական կադաստրի վարման համակարգի ներդրում և դրա արդյունավետ կառավարման ապահովում`

-Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ավտոմատացված (on-line) համակարգի ներդրում, անշարժ գույքի վերաբերյալ գրանցված իրավունքների և սահմանափակումների, որակական և քանակական տվյալների միասնական տեղեկատվական համակարգի ներդրում և կառավարում,

- կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում և տեղեկատվական կենտրոնում ներդրվելու է անշարժ գույքի գրանցման ավտոմատացված համակարգ և ապահովվելու է արտաքին օգտագործողներին դրա հասանելիությունը,

-Շուկայական մեխանիզմների վրա հիմնված` անշարժ գույքի հարկման նպատակով գնահատման նոր համակարգի ներդրում և գնահատման աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ անշարժ գույքի միասնական հարկին անցման աշխատանքների իրականացում,

-Անշարժ գույքի շուկայի զարգացմանն աջակցում:

բ) Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացում`

-Պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրայի, թեմատիկ) թվային ֆոնդի ստեղծում` հիմնված նորագույն տեխնոլոգիաների վրա,

-Արբանյակային, օդային և վերգետնյա հանույթային տեխնոլոգիաների հիման վրա ֆոտոգրամետրիկ մեթոդների ներդրում,

-Աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման ավտոմատացված համակարգի ներդրում,

-Արբանյակային տեխնոլոգիաների հիման վրա պետական գեոդեզիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացում,

զ) Հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում՝

-Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների (համայնքների) սահմանների ամրացման աշխատանքների իրականացում,

-Հողային ռեսուրսների կառավարման, հողերի օգտագործման արդյունավետության բարձրացում,

-Հողերի միավորման ծրագրերի կազմակերպում և աջակցում,

-Պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների կատարելագործում, հողի շուկայի ձևավորման աջակցություն:

### **Պետական վիճակագրություն**

Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով մասնավորապես նախատեսվում է.

-վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները, հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,

-վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ շարունակել և ընդլայնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,

-վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով՝ շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), ինչը ենթադրում է նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

-վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց՝ շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները, միաժամանակ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները,

-համալրել, արդիականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեզիստի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,

-շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողմնորոնման միասնական համակարգի մասը կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (այդ թվում՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգչի, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգչի, վիճակագրական միավորների դասակարգչի և

այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները (այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),

-անցում կատարել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը՝ հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

-տեղական (համայնքային) վարչական ռեգիստրների (այդ թվում՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց, կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

-շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

-ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման նպատակով՝ աշխատանքներ իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրմանն ուղղությամբ,

-վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով՝ ընդլայնել վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ ընդլայնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տարածման հնարավորությունները,

-կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

### **ՀՀ ռստիկանություն**

ՀՀ պետական բյուջեից ՀՀ ռստիկանության հատկացումները կնպաստեն հետևյալ խնդիրների լուծման բարելավմանը՝

-Անճի կյանքի և առողջության դեմ ուղղված, ծանր, առավելագույն ծանր հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացմանը,

-Թմրամիջոցների ապօրինի շրջանառության, թմրամոլության դեպքերի կանխարգելմանը,

-Տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացմանը,

-Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացմանը,

-Հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացմանը,

-Անօրինական շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև բնակչության մոտ պահվող զենքի և զինամթերքի հայտնաբերման, առգրավման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,

-Անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ - դաստիարակչական աշխատանքների բարելավմանը,

-Ճանապարհային ոստիկանության բարեփոխումների ապահովմանը,

-Ոստիկանության գործունեության իրավական դաշտի կատարելագործմանը,

-Հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացմանը :